

375

W-11

uy



00 APR 2010

(ՀԱՎԵԼՎԱԾ «ԺՈՂ. ԼՈՒՍ.» ԱՄՍԱԳՐԻ № 3-Ի)

Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳԻՐԸ

Ա. ԽՈՒՄԲ

1. Առաջին ուրեք գլուխներ

Երեսուրսիաներ զեպի շրջա-
կայքը. բուսերի և կենդանիների
զիտողություն. չերխաներին
հետաքրքրող բնություն լերևույթ-
ների մասին թեթև գրույցներ:

Նյութեր ժողովել գրադմունքի
սենյակը գարգարելու համար.
հիմք դնել կենդանի անկյան:

Առողջ և հիվանդ մարդ. աճման
մասին պաղափար: Մանկական
հիվանդություններ. տարափոխիկ
հիվանդություններ և նրանց
պատճառները:

Աշխատանքի գրադմունքները
ընտանիքում: Աշխատանքի բա-
ժանումը ընտանիքում: Ինչ պետք
և անհրաժեշտ: Զրույցի մի-
ջոցով պարզել աշխատանք կազ-
մակերպելու անհրաժեշտություն-
ներ: Ծանոթանալ մյուս խմբերի
աշխատանքներին՝ նրանց աշխա-
տանքի բաշխմանը:

Ծանոթանալ գլուխների կա-
րգավորման և նրանցից ոգավելու
ձևերին:

Պարզել չերխաչի ընտանիքի
կազմը: Յերխաչներին վարժեցնել
պարզ ինքնակազմակերպման:

Մշակել գլուխների աշխա-
տանքների հետ կապված կար-
գապահական պարզ կանոններ:

Զրույց և աշխատանք չեր-
խաչների ծնողների հետ: Նրանց
մասնակցությունը աշխատանք-
ների կազմակերպման գործում:

2. Յերխաչի առողջապահու- թյան պահպանությունը

Դիտել բնություն մեջ կատար-
վող փոփոխությունները և հա-
մեմատել, ամբար հետ ու աշխատանք
սկզբի հետ: Պայմանական նշան-
ներով և նկարներով բնություն
որացույց: Որվա փոփոխությունը.
ոգավել ժամացույցից. շաբաթվա
որերը, որվա ժամերը: Արեի ըն-
թացքի զիտողություն. չերկինք,
աստղեր, լուսին, ամպամածու-
թյուն, անձրև և քամի:

Տերխաչի. գաշտերի գունա-
փոխությունը. թռչունների չուն.
միջատները աշխատանքի վերջին, վեր-
անդ են ձմեռում միջատները և
քուն մտնող կենդանիները:

Առողջապահական աշխատանք-
ներ գլուխում և նրանց կերպ-
ությունը բնականում. Կերպեր,
չերխաչ, չերկինքների, մազերի
մաքրություն: Կազմակերպել ձևեր,
սպիտակեցնել, հագուստի, կոշիկ-
ների մաքրություն:

Զգայարանների վարժություն-
ներ: Առողջապահական խաղեր և
մարզանք. քնելու, ուտելու, ա-
ռողջապահական կանոնների կի-
րառումն ընտանիքում: Արտաք-
նոցից ոգավելու ձևեր և արտաք-
նոցի մաքրության կանոնները:
Նստելու առողջապահական դիր-
քը գասարանում և տանը:

Սենյակը մաքրելու, ոգը փո-
խելու սովորություններ:

Յերխաչների բժշկական քնն-
նություն, նրանց քաշը, հասա-
կը, չափը:

3. Միջավայրն ու աշխատանք առանց լեզվ ձմեռն հախա- պահապանություններ

Դպրոցական չենքը կարգի բե-
րել ձմեռն համար. փեղկերը ամ-

Առողջապահական տարրական
կազմակերպություն. առողջապա-
հական հերթապահությունների
կազմակերպումը գլուխում:

Ծնողների աշխատակցություն-
ներ չերխաչների առողջապահու-
թյան գործում՝ գլուխում և ըն-
տանիքում:

Երեսուրսիա զեպի բժշկի ըն-
դունարանը, զեղատուն:

Դպրոցական զեղերի պահարա-
նի կազմակերպությունը:

Առողջապահական պարտադիր
կանոնների մշակումը:

Ընտանիքում ինչ են անում:
Բերքի ժողովելը. աշխատանքը

65691

րացնել, ապակիները գցել, ճեղքերը ծածկել, փայտ պատրաստել, վառարանները կարգի բերել: Դպրոցական պարտեզում բույսերը փաթաթել: Յերեխաների հագուստի պատրաստություն՝ ձմրան համար: Եքսկուրսիա դեպի աշնան աշխատավայրերը: Բերքը ժողովելու, ամբարեկու մասին գաղափար:

Աշնանը ի՞նչ ապրանք է բերել կոռպերատիվը մեր ընտանիքի համար:

պարտիզում, բակում, ժառանգում, գոմում:

Մենք, հագուստի, վառելիքի պատրաստութ. ընտանիքում:

Ի՞նչ ապրանք է վաճառել ընտանիքը, ի՞նչ է գնել և վորտեղ: Հաճախումներ յերեխաների ընտանիքը և զրույցներ սրա շուրջը:

Կազմակերպված մասնակցություն Հոկտեմբերյան և Նոյեմբերյան տոնակատարություններին:

Բ. Տ Ր Ի Մ Ե Ս Տ Ր

Ձյան դիտողություն. չեղանակի որացույց և պարզ որագիր. դիտողություն ձմրան քամիների: Տաք և ցուրտ որերը ձմրանը: Արևը ձմրանը. ամպամած և պարզ որերը: Դիտողություն առվի, գետի, աղբյուրի և հորի ջրերի: Սառուց վորտեղ և առաջանում: Բույսերը ձմրանը. կուկոններ. ձյան, հողի տակ ձմեռող բույսերը, կենդանիները. թռչունները ձմրանը. կենդանիների հետքերը ձյան վրա: Եքսկուրսիա մոտիկ վայրերը, ձմեռը պատկերացնող նկարների դիտողություն:

Կյանքն ու աշխատանքը ձմրանը. դպրոցի աշխատանքները ձմրանը. սենյակների տաքացնելը և առողջապահական աշխատանքներ (մաքրություն, ողափոխություն):

Ձմեռային խաղեր ազատ ողում ուսուցչի ղեկավարությամբ:

Ձյան մաքրելը: Ձմեռային հանդեսներ: Յերեխայի ընտանիքում կատարելիք աշխատանքների ծրագրումը և հրահանգումը: Կենդանիների ձմրան խնամքը:

Ձմեռային աշխատանքներ ընտանիքում: Ի՞նչ են անում հայրը, մայրը և ընտանիքի մյուս անդամները: Ձմեռային յերեկոն ընտանիքում: Փաղաք գնացողների պատմածները. ընտանիքից հեռու գնացել քաղաք, ի՞նչ է տարվել քաղաք և ի՞նչ է գնվել քաղաքում: Բանվորի և գյուղացու փոխադարձ կապը—նրանց ընդհանուր շահերը. հարուստ և աղքատ ընտանիք սրանց աշխատող ձեռքերը. վարձու աշխատողը հարուստ ընտանիքում:

Բնության մեջ սկսվող փոփոխությունների դիտողություն. սառուցի և ձյան հալչելը. արևի դերքը յերկնակամարում. ստվերոտ և արևկող տեղեր, սրանց տարբերությունը, առաջին ծիլերը, ձնծաղիկ: Կուկոնների տեսքը և առաջին բողբոջները. առաջին միջատները: Դիտել վերադարձող թռչուններին: Ընտանի կենդանիների տեսքը, նրանց բուրգը, շարժումները:

Բնության գրավոր որագիր:

Պատրաստել առվակներ հալուցի ջրերի համար: Սերմերի ծիլցնելը կենդանի անկյունում. բացված ծաղիկների խնամքը. կուկոններով ձյուղերի բացելը սենյակում և դիտողություն նրանց փոփոխությունների:

Դպրոցի կենդանիները գոմից հանելը առաջին արոտի.—

Գործիքներ ձեռք բերել գարնան աշխատանքների համար.

Հողի ուսումնասիրություն.

Ոգնություն մեծ աշակերտներին ջերմոցի աշխատանքներին: Ծրագրումը գարնանային աշխատանքների և եքսկուրսիաների: Գարնանային խաղեր բակում:

Ընտանիքի նախապատրաստությունը—ընտանիքի աշխատանքներին: Ոչ ուրստնետական գործիքների կառույց բերելը. եքսկուրսիա սիա դեպի դարձնոց, հյուսնոց, վորտեղ գյուղատնտեսական գործիքներ են պատրաստվում և վերանորոգվում:

Կենդանիների կերի պաշարը և կենդանիների արոտ հանելը:

Մթերքների, փայտի պաշարը ընտանիքում. եքսկուրսիա դեպի մառան. փայտի պահեստ և այլն:

Գրել տալ ընտանիքի աշխատանքների մասին նախադասություններ:

Մասնակցություն Լենինյան որվան, փետրվարյան և հարմիր բանակի տոներին:

Գ. Տ Ր Ի Մ Ե Ս Տ Ր

Դիտել գարնան բնության ատիճանական փոփոխությունները և գրի առնել: Գարնանային անձ-

6. Կյանքն ու աշխատանքը գարնան

Կենդանի անկյունը փոխադրել դուրս, գարնանային աշխատանք-

Ընտանիքի գարնանային աշխատանքների մասնակցելու ծրագիրը:

ներ կայծակ, վորոտ, կարկուտ ամպամած և պարզ որերի թիվը: Արևի ճառագայթների ուժը համեմատել ձրման հետ: Դիտել հողի խոնավությունը. հողի մեջ փնտրել ծոց սերմեր և դիտել: Հետևել ի՞նչ կարգով են կանաչում պարտեզի ծառերը. կազմել ծաղիկների ժողովածու, սովորել ամենատարածված բույսերի անունները և դրի անունը:

Նոր լեռնացող միջնադարի, թըռչունների և կենդանիների դիտողություն. հետևել բույս շինելուն և ձագեր հանելուն:

ներ հողի վրա, ծաղկոցի վերաբերյալ աշխատանքներ. սածիլ գնել, մասնակցություն մեծերի ծառատունկի աշխատանքներին:

Կազմակերպել զարնան տոն: Սենյակները հարմարեցնել զարնանը. լուսամուտները բռնալվառարանները մաքրել և դուրս տանել:

Յերեխաների կազմակերպումը զարնան աշխատանքների շուրջը. հաճախումներ մյուս խմբերին և դպրոցներին:

Թեթև նամակագրություն այլ դպրոցների հետ:

Ծնողների հետ խորհրդակցություն այս մասին: Թվական տեղյակներով պարզել ընտանիքի ցանքսի չափը, կենդանիների թիվը և սրանցից սպասվող բերքի քանակը: Պարզել հողը պարարտացնելու, առուները մաքրելու, սերմը գտնելու և այլ աշխատանքների նշանակությունը: Եթակուրսիս ղեկավար քանի աշակերտների տնտեսություններ:

Ծրագիր աշակերտների ամբողջ տնային աշխատանքներին:

Մասնակցություն մարտի 8-ի և մայիսի 1-ի տոներին:

Հաշվետու ցուցահանդես տարվա աշխատանքների. ցուցահանդեսի նյութ են լինելու ա) բնություն, նրա դիտողությունները, որագրերը, նկարները, ժողովածուները: բ) Աշխատանք—կենդանի անկյուն, պատրաստած մոդելներ, ծեփը և ձեռքի մյուս աշխատանքները: գ) Յերեխաների ձեռագրերը. կարգացած հողվածները, գործածած իրերը և գործիքները: դ) Ի՞նչ նորություն և մտքեր դպրոցը յերեխաների և նրանց ընտանիքների կյանքում:

Աշխատանքները պիտի դնել տարվա սկզբին և վերջինը, հետևություն համեմատելու համար:

Կազմակերպել կենդանի ցուցահանդես—խաղերի, յերգերի, վոտանավորների, ընթերցանություն, դրամատիկացիայի, նկարչություն:

Բ. ԽՈՒՄԲ

ՅԵՐԵՔԱՆԵՐԻ

1. Ամբողջումն ամառային ըզրադմուծումների յեղ կազմակերպումն գպրոցական կյանքի

Ամրան պատկերներ. յեղանակները ամրանը, շոգ և զով որեր, անձրևներ, կայծակ, վորոտ, կարկուտ. արոտատեղիները, անտառի, պարտեզի, ալգու տեսարանները, գետը, լիճը և այլն, յերեխաների ապրումները այս բոլորից և ժողոված իրերը ու նրանց կարգավորումը:

Ծրագրումն բնության դիտողությունների այս տարվա աշխատանքի բաժանում ընկերների մեջ:

Ամրան կատարած աշխատանքները, հնձի կալի աշխատանքների մասնակցությունը: Անասունների արածացնելն. այգում, բոստանում կատարած աշխատանքը. զիշերելը, լողը, ամրան խաղերը, ճամբորդությունները:

Պարզ շարադրություն ամփոփել յերեխաների կատարածը:

Լսել մյուս խմբերի ղեկուցումները իրենց կատարած աշխատանքների մասին:

Դպրոցական կյանքի կազմակերպումը, խմբակների բաժանումը. աշակերտական կոոպերատիվին անդամագրվելը, դպրոցական կանոնների մշակում և աշխատանքի բաժանումը կարգապահության, սենյակի կահավորման և այլ գործերի համար: Ծանոթանալ բարձր խմբերի աշխատանքի ծրագրին և կազմակերպություն ձևերին: Զանազան աշխատանքների հաշվետվան, որագրերի ձևի մշակում:

Ընտանիքում պատահած փոփոխությունները:

Ընտանիքի կատարած աշխատանքները:

Ի՞նչ նորություն են մտքեր դպրոցի աշակերտները իրենց ընտանիքում ամրանը:

Ի՞նչ պիտի անի մեր դպրոցը և խումբը ընտանիքում և գյուղում այս տարի: Խորհրդակցել գյուղխորհրդի հետ:

Տարրական տեղեկություններ մարդու մարմնի կազմության մասին, կապելով այն յերևույթների քննություն և առողջապահական խնդիրների հետ: Մարդու մարմինը համեմատել կենդանիների մարմնի հետ:

Պտուղների և բանջարեղենի հասունանալը, պտղի կազմությունը, պտուղների գույնը, հոտը, համը:

Մանդատը նույնի կուտակումը պտուղների, պալարների, սոխարմատների և այլ արմատապտուղների մեջ: Պարտեզի, այգու, բանջարանոցի ֆլասատուները աշնանը:

Այս տարվա բերքը աչգում, պարտիզում կամ բանջարանոցում: Աշնանացանը—մինչև ձյունով ծածկվելը, զանազան տիկների սերմերը, կազմությունը և ծվելը: Բնությունը որացուց գրավոր և նշաններով:

Փորձեր ջրի հետ, գոլորշիացման, աղերի լուծելու, յեռացրած ջրի առողջապահական նշանակությունը, կրակ, այրվող նյութերը մեր գյուղում, ածխածման փորձ:

Բրգի և բամբակի հագուստի տարբերությունը (ձմրան ցրտի դեմ) կենդանիների և բույսերի ցրտից պաշտպանվելու բնական հարմարությունները:

2. Առողջապահությունը դպրոցում, բնակիչում յեվ գյուղում

Յերիխաներին կռել և նրանց հասակը չափել: համեմատել անցյալ տարվա թվերի հետ:

Մարմնի մաքրության կանոնները լրացնել, համեմատելով անցյալ տարվա սովորածների հետ: Հագուստի, աշխատանքի, սննդի, քնի մասին, առողջապահական խորհուրդներ և գրավոր կանոններ և լողունգներ բնակարանի, դասարանի առողջապահության կազմակերպումը:

Հիվանդության պատճառով դպրոցից բացակայող ընկերների հաշիվ պահել: Կազմակերպել հիվանդ ընկերների բժշկական ոգնությունը:

Կարգի բերել դպրոցի և խմբի դեղորայքը:

3. Առնանայի 6 աշխատանքները գյուղում

Աշխատանքներն աչգում, պարտեզում, բանջարանոցում: Բերքի ժողովելը: Մասնակցություն բերքի տոնին: Պտուղների, բանջարեղենի պահելու աշխատանքներ: պահածոներ պատրաստելը, աղ և թթու դնելը: մատանի առողջապահության պայմանների ուսումնասիրություն: խաղողի բերքը, զինի, դոշար պատրաստելը: Աշնան հունձը գյուղում: Մի քանի բույսերի տեղափոխությունը ծաղկամանների մեջ, կենդանի անկյան համար:

Կերակուր պատրաստելը—մթնեղենների լվանալը, մաքուր ջրի նշանակությունը առողջության համար: կրակը և յիփելու նշանակությունը: Ջրի յեռացնելը:

Ջրաղաց ալյուր պատրաստելը, հաց թխելը: Մշակել կանոններ և լողունգներ սննդի առողջապահական նշանակության մասին:

Հագուստի պատրաստություններ: Խնչ կտորներ են գործադրում մեր գյուղում հագուստի համար:

Հագուստի, կոշիկի կարկատաններ անելը կոճակ կտրել և կոճակին մերք շինելը: Հագուստի

Մեր գյուղի առողջապահությունը: գյուղացիները մեզնում քանի ժամ են աշխատում, քնում: Մի քանի բնակարաններ հաճախել և չափելով պարզել նրանց առողջապահական հատկությունները: մեր գյուղացիների բակի, բնակարանի, գոմի մաքրությունը, խոնավությունը, լուսավորությունը չափել:

Գյուղի փողոցները, աղբյուրը:

Քանի տուն ունի արտաքնոց: Խնչ անենք վոր մեր ընտանիքում մաքրություն լինի:

Հաշիվ պահել գյուղում յեղած հիվանդությունների:

Գյուղի պատկերներ աշնանը: զանազան ընտանիքների, աչգիների, պարտեզների և բանջարանոցների համեմատությունը: Հարուստ և չքավոր գյուղացու տնտեսությունը մեր գյուղում:

Կոպերատիվը աշնանը:

Քաղաքը Խնչ և տալիս մեր գյուղին: Գյուղից վաճառքի հանվող ապրանքը:

Ընտանիքներում կերակուր պատրաստողները—նրանց աշխատանքի պայմանները: Խնչ անենք վոր գյուղացու սնունդն ավելի առողջաբար լինի:

Ձուլհակը, դերձակը, կոշկալարը մեր գյուղում: Ընտանիքի վոր անդամներն են զբաղվում հագուստի և կոշիկի գործով:

Ջերմութեան վատ և լավ հա-
ղորդիչներ:

Ոգափոխութեան ժամանակ ու-
ղի շարժումը սենյակում: Քամու
պատճառները:

Մեր գլուղը պաշտպանութեան
բնական պատնէշներ ունի՞ ձըմ-
բան ցրտից և քամիներից:

Ձմրան պատկերը դիտել, նկա-
րել և նկարագրել: Յեղյամ, ձյուն,
սառուց, նյութի յերեք վիճակը.
ձյան հաստութիւնը չափել: Ծըն-
շումով ձյունը սառուց դարձնել.
սառուցը թեթև և ջրից (փորձել)
Ջուրը սառչելով ընդարձակում
է (փորձ. ջրով լի շիշը սառցնել):
Սառչող ջուրը քաշքաշում է լիւ-
սերը: Քամի, նրա պատճառը
(փորձ):

Քամու ուղղութիւնը. մեր գլու-
ղում վեր կողմից են փչում ձըմ-
բան քամիները:

Դիտել ձյան տակի բույսերը և
համեմատել անյայտ տարվա դի-
տածի հետ: Ձյան տակ ձմեռող
սերմերից ծիցնել և աճեցնել:

Յերեկվա տեղութիւնը, արե-
վի դիրքը. արեւելքի և արեւմուտ-
քի կետերը վորոշել՝ հորիզոնի
վրա:

Յեղանակի որագրի մշակումն:

Անցյալ տարվա աշնան տվյալ-
ները համեմատել այս ձմրան տըվ-
յալների հետ:

Փորձել այրման վրա. պարզել
ոգի (թթվածնի) անհրաժեշտու-
թիւնը—այրման ժամանակ. սրա
հետ պարզել վառարանի ողանցքի
և ծխնելուղի դերը:

Մեր բնտանի կենդանիների
արտաքին նկարագիրը, տալով
մարմնի մասերի տարրական կեն-
սաբանական նշանակութիւնը:

Ծանոթանալ կովի և վոշխարի

մաքրութեան առողջապահական
նշանակութիւնը:

Մշակել կանոններ հագուստի,
առողջապահութեան և մաքրու-
թեան մասին:

Բնակարանի ձմրան պայման-
ներին հարմարեցնելը. առողջա-
պահական պահանջներ լուսի, ու-
ղի, ջերմութեան նկատմամբ:

Դասարանի չափերը, պարզել,
վորքան հարմար է նա ձմրան
աշխատանքների համար: Կենդա-
նիների համար գոմ պատրաստե-
լը: Սահնակով գոմը մեր գլու-
ղում—լուսի, ջերմաման, հատա-
կի մաքրութեան և ուղի քանակի
տեսակետից: Կենդանիների ա-
ռողջ սնունդը:

Մշակել լողունգներ և կախել
գլուղի խրճիթ-ընթերցարանում:

4. Այսպէս ձմեռնը յեւ ձմեռա- յից աշխատանքներ

Ձմեռային աշխատանքները գլու-
ղում: Աշխատանքը դարբնոցում,
ատաղձագործարանում. տնայնա-
գործները մեր գլուղում. ծանո-
թանալ արհեստավորի և տնայ-
նագործի գործիքներին. աշխա-
տանքներ դպրոցի արհեստանո-
ցում: Մեծերի ոգնութեամբ սո-
վորել գրքի կազմը պատրաստել
կարկանդակ հագուստ, կոշիկ. փայ-
տի թեթև աշխատանքներ գոր-
ծադրելով սղոց, դանակ, մուրճ:
Արհեստանոցում վերանորոգել
դասարանի կարասիքը—մեծերի
ոգնութեամբ:

Հաշվել արհեստավորի աշխա-
տանքի արդյունքները: Հաշվել
կենդանիների սննդի և տված կե-
րի արժեքը և համեմատել: Աշ-
խատանքներ կենդանի անկու-
նում: Կենդանիներին խնամելը.
մասնակցել կաթի մշակման աշ-
խատանքներին. Մեր գլուղի կեն-
դանիների քանակը: Եղսկուրսիա
յերը հարկավոր է: Զրույց գոր-
ծարանի մասին:

Մեքենայի և ձեռքի աշխատան-
քը և նրանց համեմատութիւնը:
Գլուղի ի՞նչ մթերքներն են մը-
շակվում գործարաններում: Ի՞նչ
ծարանային մշակման արդյունք-
ները: Մեր գլուղի ձմրան ճանա-
պարհները և փոխադրական մի-
ջոցները:

Բնակարաններ շինող արհես-
տավորները մեր գլուղում:

Ի՞նչ պայմաններով են աշխա-
տում նրանք գլուղում:

Ծանոթանալ արհեստավորի և
տնայնագործի որվա զբաղմուրք-
ներին. Աշխատանքի տեղութեան
ժամերը:

Արհեստավորի աշակերտները և
նրանց աշխատանքի պայմաննե-
րը:

Յեթի կա արհեստավորների և
տնայնագործների միութեան, ծա-
նոթանալ նրա կանոնադրութեան
հիմնական կետերին. ինչ և ար-
տահանում գլուղը՝ քաղաքում մը-
շակելու համար (բաժրակ, բուրդ,
կաշի, խաղող, այլ պտուղներ,
փայտ և այլն):

Բանվորի արտադրական կա-
պը գլուղացու հետ:

Զրույց քաղաքի կյանքի և բան-
վորի ու գործարանի մասին (բե-
րել որինակներ մոտիկ քաղաքի
և գործարանի կյանքից):

Կա՞ վարձու աշխատանք մեր
գլուղում (բատրակ, գլուղական
բանվոր):

Մեր գլուղխորհրդի աշխատան-
քը ձմրանը:

Կոոպերատիվը, փոքր ձմրան
ամիսներին:

մարտոգության գործարանների հետ:

Մսակեր (շուն, կատու) և խոտակեր կենդանիների բերանի կաղմությունը (դունչը, ատամները, լեզուն): Ընտանի աշխատող կենդանիները (ձի, եղ, չեղ, գոմեղ). մկան և վոսկոր: Դիտողություն կենդանիների սովորությունների: Պատահած վայրի կենդանիների մասին զրույց:

ա) զիտել թռչունների կենցաղը, նրանց ուտելու, խմելու, հանգստանալու, պաշտպանվելու և այլ սովորությունները: Բնության մեջ թռչունների դարձին հետևել և գրել ի՞նչ հերթով են յերևան գալիս մեր գյուղի շրջակայքում թռչունները: Նրանց բուն հյուսելը և ձու դնելը:

բ) Ծանոթանալ ցանված բույսերի սերմերին, և ծլած ու աճած գործարաններին: Եքսկուրսիա դեպի դաշտ և անտառ՝ զիտելու բույսերի մեջ առաջացող փոփոխությունները:

գ) Ձյան հալոցը. ձյան գոտին լեռների վրա, ջրի գոլորշիացումն ու ջրի հողի մեջ ծծվելը, առուների և գետերի ջրի վարարելը. փորձ առվակի ջուրը մաքրելու. ջուրը մաքրել. քամիչը տան պետքերի համար: Ջրի միջից դատել ճալաքարը, ավազը, կավը, տիղմը: Ավազի և կավի հատկությունները՝ ջրի նկատմամբ: Պարտիզի հողը վերլուծել ջրի ոգնությունը, զատել կավը, ավազը, բուսահողը:

5) Գարնան սկիզբը յեվ ցախապատեղություններ գարնանային աշխատանքների

ա) Մեր ընտանի թռչունների կերակրելը. նրանց թուխս դնելը. ձվերի ընտրությունը. հետաքրքրվել գյուղում վճիռ գյուղացու թռչուններն են լավը, ընտրովի: Թռչունների և նրանց ձագերի պահպանությունը:

բ) Սոխարմատ, կոճղարմատ, արմատապտուղ բույսերի ծլեցնելը ու աճեցնելը: Ծաղկամաններում և արկղներում ծաղիկներ ցանել, ցանել բանջարանոցային բույսերի սերմեր՝ սածիլ պատրաստելու համար: Մասնակցություն մեծերի ջերմոցային աշխատանքներին: Եքսկուրսիա գյուղի այն տնտեսությունները, ուր նման աշխատանքներ են տարվում: Աշխատանքները պարտեզում, այգում:

գ) Հողի պարարտացման աշխատանքներ. կենդանիների աղբը, մոխիրը արտերը, բանջարանոցները և այլ տեղեր կրել: Առուները մաքրել: Առուների ցանցը ուսումնասիրել և նկարել:

դ) Գարնան չերկրագործական գործիքներին ծանոթանալ և մոդելներ պատրաստել, (տեսնել մեքենաները գործելիս աշխատանքի վայրում՝ եքսկուրսիաների ժամանակ):

ա) Ի՞նչ տները վոր թռչունների թիվը շատանա մեր գյուղում: Ինչի՞ համար և պահում գյուղացին թռչուններ. քանի տնտեսություն մեր գյուղում թռչուններ և պահում: Ընտանի թռչունների քանակը մեր գյուղում:

բ) Գյուղում, բույսերը պահպանելու և բազմացնելու ի՞նչ հասարակական աշխատանքներ են տարվում—ծառատունկ: Հասարակական այգի տնկել. տրնկարանի դերը մեր գյուղում:

գ) Ի՞նչ և անում մեր գյուղի հողային հանձնաժողովը:

Գյուղի վճիռ տնտեսություններն են ավելի զբաղվում հողի պարարտացման աշխատանքով:

դ) Ծանոթանալ գյուղխորհրդի աշխատանքներին գարնան ըսկզբին, ծանոթանալ նրա գարնանային աշխատանքի ծրագրին. գյուղխորհրդից ստանալ գարնան աշխատանքների համար առաջադրություններ, յերեխաների ու ժերի համեմատ:

Գյուղի փոխգործը վճիռ տրտեսություններին և ոգնում, և ինչպես և ոգնում:

Կոոպերատիվը ինչ նոր ապրանքներ և ստացել գարնան աշխատանքների համար:

6) Գաղափարային աշխատանքներ.

ա) Բնության զիտոգոլթյունները—արևի պիլլը յերկնակամարում, ցերեկվա տեղոգոլթյունը, անձրև, կարկուտ, կայծակ, վոլորտ. գարնան քամիները, ցուրտը և շոգը. նշանակել որագրերում և ամբողջ տարվա զիտոգոլթյունների ամփոփումն կատարել:

և) զիտել ծլող, աճող և ծաղկող բույսերը և նկարել: Կալմել բույսերի փոքրիկ ժողովածուներ: Սովորել ճանաչել մշակովի բույսերը, տարածված մոլախոտները և ինչն է նրանց տված վնասը. բանջարանոցի, այգու և պարտեզի ֆլասատուների կոլեկցիա կազմել: Ինչ ֆլասներ են ավել տալ գարնան գյուղերը, կարկուտը և յերաշտը բույսերին:

Դիտել հոտի կյանքը, արածելիս, հանգստանալիս, պաշտպանվելիս: Կենդանիների ֆլասատու միջատները և նրանցից պաշտպանվելու ձևը:

Դիտել թռչունների կենցաղը. ձագերի աստիճանական աճումը և կերպարանափոխությունը:

ա) Մասնակցել դաշտային աշխատանքներին դպրոցական հոգամասում. վերցնել մեկ կտոր հող և խմբովին մշակել: Սովորել ոգտվել գյուղատնտեսական գործիքներից (բահ, փոցիս, թեթև քլուսնգ, թորխ): Ծանոթանալ գյուղի գյուղատնտեսական ավելի բարդ մեքենաներին. եքսկուրսիա դեպի գյուղատնտեսական մեքենաների կայանը: Ծանոթանալ աշնանացանի վիճակին: Աշխատել պարզել վոլքան հաջող և այս տարվա աշնանացանը. Ինչ բույսեր են ցանում գյուղում այս գարնանը:

բ) Բանջարանոցային աշխատանքները, մագեր պատրաստել, սերմերը տնկել, ծլեցնել և այլն: Մասնակցել քաղհանին:

գ) Այգու և պարտեզի աշխատանքները մեր գյուղում. չորուկները կտրել, վոչնչացնել ծառերի վրա չերևացող ֆլասատու միջատներին. զիտել պատվաստած ծառերը, նոր ծառեր և թփեր տնկել:

դ) Կենդանիներին արոտ տանելը. նախապաշին աշխատանքը հոտի նկատմամբ—ամեն օր: Ինչ ընտանի կենդանիներ պահենք դպրոցում: Լրացնել կենդանիների կերի և հանգստի մասին ձմրան մշակած կանոնները. հորթերի խնամքը—կերակրելը, մաքրելը և այլն:

Շարունակել թռչունների խնամքը:

Գարնան սկզբից դրսից ովքեր են չեկել գյուղ (բժիշկ, գյուղատնտես և այլն) և ինչ նպատակով:

Գյուղացիք գյուղից դուրս ռը են գնում տարվա այս սեզոնին:

ա) Հաճախել գյուղխորհուրդ, հաշիվ տալ խմբի կատարած աշխատանքի մասին, և նոր առաջադրություններ ստանալ ինչ գրություններ և ստանում գյուղխորհուրդը գարնանը և ինչ կարգադրություններ և անում:

բ) Գյուղացիների հասարակական աշխատանքները:

Գյուղում Ինչ նոր շենքեր են շինվում: Փողոցների, բակերի մեջ Ինչ փոփոխություններ են կատարվում:

Փոխակցել և կոոպերատիվ աշխատանքները:

գ. Հողը ինչ ձևերով են ոգտագործում մեր գյուղում. (չեռադաշտ ու բազմադաշտ սիսեմ). գյուղատնտեսական կոլեկտիվները մեր գյուղում (արտել, միություն). ծանոթանալ նրանց կանոնադրության և աշխատանքներին:

Վորքան հող կա մեր գյուղում վորքան է ընկնում մեկ շնչին. վորքան կենդանի կա գյուղում՝ ըստ տեսակի և ցեղի:

Մեր գյուղի գյուղատնտեսական անկենդան ինվենտարը—ըստ տեսակների. Քանի տնտեսություն կա գյուղում. նրանց խմբավորել ըստ աշխատող ձեռքերի, հողի քանակի և ինվենտարի: Ստանալ թվեր գյուղխորհրդում, հարուստ, միջակ և չքավոր տնտեսությունների մասին ու պարզել այդ ընտանիքների կենցաղը: Ամառը ընտանիքում և գյուղացում անելիք աշխատանքների ծրագիրը մշակել:

Գ. ԽՈՒՄԲ

Մեր գյուղն ու գավառակը

Մեր գյուղի դիրքը շրջանի գյուղերի և ամենամոտ քաղաքի նըկատմամբ, աշխարհի մասերով, կողմնացույցի ոգնությունը, մեր շրջապատի լեռները, բլուրները, նրանց ձևը, դիրքը, անունը:

Աթոռորդարանական դիտողություններ և որացույց, (ջերմության չափումները, ամպամածություն, տեղումներ, քամի, իշխող քամիները մեզնում) ջերմաչափ, պարզ անձրևաչափ, ինքնաշին հողմացույց: Ողի կազմությունը և դերը բույսերի և կենդանիների համար, ածխածնի գազ, թթվածին, ծանոթություն մեր գյուղի և շրջանի կուլտուրական բույսերին (հացաբույսեր, պտղատու ծառեր, բանջարանոցային բույսեր, տեխնիկական, չուղատու բույսեր, (բամբակ, վուշ, կանեփ, կունջուտ, արևածաղիկ) — անասունների կեր ծառայող բույսերը մեզնում: Ծանոթություն բույսերի գլխավոր մասերին — ավելի մանրամասն — նրանց ոգտագործելի մասերին (պտուղ, պտղարմատ, պալար և այլն), ժողովածու բույսերի և նրանց որգանների:

Մեր գետը, գետակը, առուները, նրանց նշանակությունը մեր գյուղի և շրջանի տնտեսության համար:

Հողի կազմությունը և տեսակները մեր շրջանում: Փորձեր սեփականողի, կավի և ավազի վրա: Լեռնային տեսակները և հանքերը մեր գյուղի շրջակայքում: Վտրոնք են ոգտագործելի տնտեսություն և շինարարության մեջ: Հավաքածու շրջանի հողերի և հանքերի տեսակների:

1) Մեր գյուղի զբաղմունքների տեսակները — հողագործությունը — ոգտակար հողի քանակը, հողի միջին քանակը՝ յուրաքանչյուր շնչին հասանելիք: Հողագործություն ճյուղերը և սրանց ընդհանուր բերքը այս տարի — մեր գյուղում:

2) Բանջարանոցային տնտեսությունները, այգեգործության չափը և սրանց բերքը այս տարի: Բուսաբուծության մյուս ճյուղերը մեր գյուղում և շրջանում. նրանց բուսած տարածությունը և բերքը այս տարի (բամբակ, բոստան և այլն). աշխատանքներ բերք հավաքելու և ամբարելու շուրջը: Մեր գյուղում ու շրջանում գործադրվող փերկագործական գործիքներն ու մեքենաները, նրանց աշխատեցնելու ձևը և համեմատական արտադրանքը. (դիտել և հաշվի առնել որինակ արորի, գութանի, և արակտորի մեկ որվա արդյունքը, մանգաղի, գերանդիի և հնձող մեքենայի և այլն): Պատրաստել գործիքների և մեքենաների մոգելները:

Մեր գյուղի և շրջանի անասունների քանակը, ըստ տեսակների, անասուն ունեցող տնտեսությունների թիվը: Մեկ կովի, վոշխարի որական կերի և աված արդյունքի քանակը:

Այս տարվա արտադրած կաթնամթերքների քանակը, մի քանի անասնապահ տնտեսություններում: Մեքենաների գործածությունը կաթի մշակման գործում՝ մեր գյուղում կամ շրջանում:

Հաղորդակցության միջոցները և կապը մյուս վայրերի հետ. — գլխավոր ճանապարհները, փոխադրության միջոցները, նրանց ընդհանուր բեռնունակությունը թվերով: Մարդն իբրև գրաստ: Գյուղում ուղքեր են իրենց ապրանքն իրենք կրում:

1) Գյուղի և շրջանի ազգաբնակչությունը ըստ ազգություն, սեռի, հասակի. արտադրողների և սպառողների քանակը: Գյուղի հասարակական շերտավորումը, քանի՞ ընտանիք և վարձու աշխատանք ոգտագործում. միջակ չքավոր և ընչազուրկ գյուղացիներ. կուլակներ թիվը մեր գյուղում և շրջանում: Բառարկներ քանակը մեր գյուղում. նրանց միջին աշխատավարձը և աշխատանքի որվա տեղությունը: Նկարել դիագրամներ և գրաֆիկներ:

2) Խորհրդային գյուղի կազմակերպությունը, գյուղ-խորհուրդ, նրա կազմը, աշխատանքի բաժանումը գյուղ խորհրդում. ծանոթություն գյուղ-խորհրդի այս տարվա կատարած աշխատանքներին և առաջիկա աշխատանքի ծրագրին: Խնչպե՞ս և ո՞վ և ընտրում գյուղխորհուրդը: Գյուղխորհրդի սխեման. Խնչավե՞ց հոկտեմբերյան հեղափոխությունն ու խորհրդային իշխանությունը գյուղացիությունը՝ հողի և ջրի հարցում: Խնչպե՞ս են պայքարել մեր գյուղի չքավորները — ազատագրության համար:

Մեր ընտանի կենդանիները.—
Թռչուններից հավ, բաղ, աղավ-
նի, տարրական գաղափար նը-
րանց կազմութեան և ապրելու
ձևի մասին: Ձու, նրա պարզ
կազմութեանը:

Կով, գոմեշ, վոշխար, խոզ, ձի,
եշ պարզ գաղափար սրանց մար-
սողութեան գործարանների և կե-
րակրելու ձևերի մասին Սրանց
սովորութիւնները, ոգտագործման
ձևերն ու չափը մեզանում:

Ուսումնասիրել եքսկուրսիայի
ժամանակ, ինչ տեղերով են անց-
նում մեր գյուղի ճանապարհնե-
րը, վորտեղից կարելի է անցկա-
ցնել ավելի կարճ և լավ ճանա-
պարհներ: Տեղափոխութեան մի-
ջոցները, գրաստները, սայլերը և
այլ կառքերը, մեքենայական փո-
խադրութեան և կենդանի փոխա-
դրողներ:

Նկարել պարզ քարտեզ մեր
գյուղի և շրջանի. գաղափար
մասշտաբի մասին. նկարել անդ-
շափտներ մեր շրջանից և գյու-
ղից:

3) Ինչ ապրանքներ և արտա-
հանում մեր գյուղն ու շրջանը.
Ինչ ապրանքներ ե բերվում գըր-
սից մեր գյուղն ու շրջանը: Կո-
ոպերատիվը մեր գյուղում և շըր-
ջանում. նրա ընդհանուր ապ-
րանքային շրջանառութեանը մի
տարում ուղղութիւններով: Դիագրամ-
ներ և գրաֆիկներ. կոոպերատի-
վին անդամագրվածների թիվը,
սրանց մեջ չքավոր գյուղացիներ
ի թիվը:

4) Մեր շրջանի որինակելի
տնտեսութեանները, արտելները,
պետ-տնտեսութեանները, արն-
կարանները և այլն, սրանց կազ-
մակերպութեան ձևերը և նշանա-
կութեանը մեր շրջանի տնտեսու-
թեան համար: Փոխադրութեան
կոմիտեի և կոոպերատիվի արն-
տեսական գերը մեր գյուղում և
շրջանում:

Մեր կապը և աշխատակցու-
թեանը նրանց:

Մեր գաղափար յեվ քաղաք

Մեր գաղափար արտագրական
գլխավոր կենտրոնները:

Արտագրութեան ինչ ճշուգիւր
կան մեր գաղափարում: Ինչ ե տա-
լիս մեր քաղաքը գյուղին և գյու-
ղը քաղաքին. մեր գաղափար տըն-
տեսութեան շրջանները, տնտե-
սութեան ինչ ճշուգիւր ունեն յու-
րաքանչիւրը. գաղափար արտա-
գրութեան չափը վերջին տալի-
ներում—գիտաբաններով և գրա-

3) Շրջագործութեան, նրա կազմը և
ընտրվելու սխալմը. գյուղխոր-
հըրդի կապը շրջագործութեան հետ
(ցույց տալ սխեմայով):

4) Մեր գյուղի հասարակական
և կուլտուրական կյանքը. կուս-
բջիջ, ԼԿՅՆՄ, պիոներական կազ-
մակերպութեան, անգրագիտու-
թեան վերացման ընկերութեան,

Ավիոքիմ, Մուպր և այլն:
Նրանի-ընթերցարան, դպրոց,
լիկեյան, պատի լրագիր, փոստ,
բաղնիք և այլն: Մեր խմբի կա-

պը սրանց հետ և աշխատակցու-
թեանը: Շրջանի հիվանդանոցը,
զեղատունը, փորձադաշտը, վար-
ձակայանը և այլն: Գյուղի կուլ-
տուրական աշխատավորները—
բժիշկը, գյուղատնտեսը, ուսու-
ցիչը, խրճիթ-վարը, կոոպերա-
տորը, սրանց կատարած աշխա-
տանքը. նկարել և շարագրել կեն-
ցաղալին ընդլիկ կրող պատկեր-
ներ, գյուղի և շրջանը կյանքից:

Ինչ կարող ե անել մեր դըպ-
րոցը, վոր գյուղի կյանքը բար-
վորվի. գեկուցում գյուղխորհրդի
նիստում: Ծրագրում դպրոցի հա-
սարակական աշխատանքի:

Մեր գաղափար ազգայնակու-
թեանը ըստ գասակարգային շեր-
տավորման. քաղաքի բնակչու-
թեանը—առանձին ըստ գասա-
կարգային կազմի. գաղափար ազ-
մինիստրատիվ մասերի բաժա-
նումը գաղափարմասերի. բանվոր-
ների աշխատանքի պայմանները
քաղաքում. աշխատանքի որվա
տեղութեանը. առողջապահական
պայմանները, աշխատավարձ, ար-

Մեր գաղափար աշխարհագրա-
կան գիրքը: Նրա սահմանները,
մակերևութը, գլխավոր լեռները
գաղափարները, ջրերը, վտուգ-
ման ցանցը, հողերը. նկարել գա-
ղափար մակերևութի քարտեզը,
մեր գաղափար կլիմայական գո-
տիները, նշանակել գանաղան շըր-
ջաններին վերաբերող միջոցոր-
տարանական տվյալները:

Բուսական աշխարհն ըստ կը-

լիմայական գոտիները—գլխավոր կուլտուրական բույսերը, նկարել մեր գավառի բուսաբանական քարտեզը:

Մեր գավառի կենդանական աշխարհը: Ընտանի կենդանիների տեսակները, Վերսի կենդանիները, վորսի շրջանները, ձրկները և ձկնորսական շրջանները:

Տալ գավառի ամբողջական քարտեզը, բնակավայրերով, հագորդակցության ճանապարհներով, լեռնաշղթաներով և այլն: Հիմնական ֆիզիկո-աշխարհագրական գաղափարներ (գաղտնավայր, սարահարթ, լճառ, հովիտ փետ, նրա ավազանը, վտակները աջ և ձախ ափ, ակունք և գետաբերան, մթնոլորտ):

Ջուրը մեր գավառում. ջրի շրջանառությունը, աղբյուրի գոյանալը. (ստորյերկրյա ջուր):

Ջրհոր, սառույց և ձյուն. սրբանց առանձնահատկությունները պարզ փորձերով: Լուծված աղերը միշտ կան գետի, աղբյուրի և ջրհորի ջրում (փորձով): Գոլորշի, նրա գոյանալու պայմանները. ոգի գոլորշուց ջուր ստանալը: Կեղտոտ ջրի թորում:

Մեր յերկրի զիրքը քարտեզով. նրա սահմանները և սահմանակից պետությունները, տարածությունը, մակերևույթը, գլխավոր լեռները. դաշտավայրերը, սարահարթերը, գետերը և նրանց ավազանները:

1) Հողերի տեսակների մեր յերկրում, լեռնային տեսակներն ու հանքերը մեր յերկրում հրաբուխ. նրա հետքերը մեր յերկրում. ցույց տալ լեռները՝ Մասիս, Արագած, Աղմաղան, Լալվար և այլն:

Հանքային տեսակներից տրախիտ, բազալտ, տուֆ, պեմզա, սրանց արգյունաբերական նշանակությունը: Մեր յերկրի մթնոլորտային զարանական հատկությունները. մթնոլորտ. մշակել տարվա ընթացքում ժողոված և այլ աղբյուրներից վերցրած մթնոլորտային և բուսաբանական ուղղաձիգ գոտիները (մերձաբևադարձային բույսերի, հացահատային, անտառային և մարգագետինների գոտիները) մոտիկ

ֆիզիկո-գավառի տեսակական նկարագրող քարտեզը: Մեր գավառի կրաղմուշներն ըստ տարվա սեզոնների:

Գավառից արտահանվող և գավառ ներմուծվող ապրանքների տեսակները և քանակը:

Փոխանակության անյարմաները գավառում պետական առևտուր, կոոպերատիվ միություններ, մասնավոր առևտուր:

Գավառի հաղորդակցության միջոցները. յերկաթուղի, խճուղիներ, սպիտակուղիներ և այլն:

Ցույց տալ և նկարել քարտեզի վրա. սեզոնային աշխատանքներ ընտանիքում և դպրոցի տնտեսության մեջ. կատարել ընտանիքի և դպրոցի համար գնումներ և պարզել վորտեղից և ինչ ճանապարհով են այդ ապրանքները հասել գյուղ:

Հաշվի առնել գյուղից արտահանվող ապրանքները. ուր են գնում այդ ապրանքները: Արհեստները, տնայնագործական արտերները:

ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ

Մեր յերկրի տնտեսության գլխավոր ձևերը. յերկրագործություն. մշակովի հողերի ընդհանուր քանակը: Հողերի քանակը ըստ առանձին մշակույթների: Համաձայն սրան մեր յերկրի գյուղատնտեսական գլխավոր գոտիները:

Արոտատեղիներ, անտառների զոնան և անտառային տնտեսության կազմակերպությունը մեզնում: Մեր ջրային տնտեսությունը:

Ջրանցքները և գլխավոր ջրամբարները:

Աշխատանք—գյուղի առուները աղբյուրը, դպրոցի հողմասի առուները, մաքրելու գործում: Գյուղատնտեսության հիմնական շրջանները—բամբակի, խաղողի, հացաբույսերի, բանջարանոցի, ծխախոտի, անասնապահության, շերամապահության և մեղվաբուծության շրջանները նշանակել քարտեզի վրա: Աշխատանքներ դպրոցի հողամասում, փորձագաղտում:

2) Արգյունաբերական շրջան-

հետապնդական միություններ—նրանց նպատակը: Հողանտառ միությունը գյուղում, նրա դերը:

Բանվորների սոցիալական ապահովագրությունը և ազգաբնակչության առողջապահությունը որդանները:

Գավառի կենտրոնական հիմնարկները, գավառիկում, գավառի թյուրո, գավ. կուս. կոմ, գավ. ԼԿՅՄ կոմ. պիոներ բյուրո. գավառի կենտրոնական կուլտ. հիմնարկությունները բաժր աստիճանի դպրոցներ, ահումբներ, թատրոն, գրադարան, թանգարան, գիտական ընկերություններ և այլն:

Գյուղի և քաղաքի կապը—հեփություն, մամուլի (թերթ) և այլ միջոցներով: Մեր գավառի անցյալը, մեր գավառում բանվորներն ու գյուղացիները ինչպես են պայքարել անցյալում, 1905—1917 թվի և 20 թվի հեղափոխությունը մեր գավառում:

Հնից մնացած հուշարձաններ և նրանց հետ կապված տեղեկությունները: Հոգևորականությունը և նրա դերը անցյալում մեր գավառում:

Մեր յերկրի աղաքանակությունը՝ թվերով. բանվորության քանակը. գյուղացիության քանակը: Սրանց թվական փոխադարձությունը: Մեր յերկրում ապրող ազգությունները: Մեր յերկրի գլխավոր բնակավայրերը: Գավառները և նրանց կենտրոնները: Բանվորագյուղացիական իշխանության կազմակերպումը մեր յերկրում. Կենտգործկոմ. ժողկոմ. խորհուրդ, կոմիսարիատներ. քաղաքը իրեն վարչական կենտրոն:

1) Ի՞նչ է անում Խորհրդային իշխանությունը մեր յերկրի գյուղատնտեսությունը բարձրացնելու համար—հողի ազգայնացումը, ջրանցքներ, մեքենաներ, բազմադաշտյան սիստեմ, հողի պարարտացման ձևերը, նոր բույսեր, տնկարաններ, սերմավորման աշխատանքներ, աղնիվ ցեղի անասուններ, կոոպերացիա, արտերներ, ճանապարհներ. կազմակերպումն հաջող բերքի նախապատրաստման տոնի:

2) Ի՞նչ ձեռք բերեց բանվոր

եքսկուրսիաների միջոցով դիտել մեր յերկրի լանդշաֆտները և նկարագրել կենդանական աշխարհի առանձնահատկությունները մեզանում—տափաստանաչին, ճահճաչին, անտառաչին համակեցությունները մեզանում (բուսական և կենդանական), պատրաստել մեր յերկրի բնապատմական նկարագրի քարտեզը:

2) Տեղեկություններ մեր յերկրի բնության անցյալից. բրածո կենդանիների և բույսերի մնացորդներ:

Նախնական ծովերը մեր յերկրում. ջրաչին կենդանիների մընացորդները կալճի, աղի, քարածուխի հանքեր: Եքսկուրսիա դեպի ձորը, գետափ՝ յերկրի կեղևի շերտերին ծանոթանալու համար: Հայաստանի զանազան գավառների դպրոցների հետ, բնապատմական ժողովածուների փոխանակություն, դպրոց թանգարանում մեր յերկրի թեման ցուցադրելու նպատակով:

ները և վայրերը Հայաստանում, հանքարդյունաբերություն, պղնձի, քարի, կրի, կավի, պեմզայի:

Ելեկտրոկայանները Հայաստանում. նրանց դերը այժմ և ապագայում. ջրի ուժը Հայաստանում. մեքենայական մշակույթներ—բամբակի, մանածախն, գինու և կոնյակի, կաշվի, սապոնի: Եքսկուրսիաներ դեպի արդյունաբերական կենտրոնները: Յերևանի և Լենինականի արդյունաբերական նշանակությունը:

Գլխավոր արհեստները Հայաստանում: Ատաղձի, պղնձի, յերկաթի, գորգի, քարտաշության, շինարարական մյուս ճյուղերը: Նկարել գյուղատնտեսական և արդյունաբերական քարտեզ:

3) Մեր յերկրի հաղորդակցություն ճյուղերը—յերկաթուղի, ուղային ճանապարհներ, խճուղիներ. կապի մյուս ձևերը, փոստ, Սևանա լիճը, հեռագիր, հեռախոս, ուղի, յերկաթուղով, ավտոմեքենայով: Գործնակ. ծանոթություն հաղորդակցության միջոցներին. հեռագիր տալ, ստանալ, նամակ գրել, հեռախոսով խոսել, ավտոմեքենային ղրջանառություն միջոցները. կոպիտատիվ ցանցը և նրա տեսակները. կոոպերացիան յենթակա բնակչության թիվը: Պետական առևտուր, նրա դերը ներքին և արտաքին առևտրի գործում: Մասնավոր առևտուրը և նրա ժամանակավոր ծավալումը: Ծանոթություն գործածելի ապրանքներին և նրանց ֆիրմաներին:

4) Մեր հանրապետության տնտեսական կապը մյուս հանրապետությունների հետ: Տփլիսի իբրև առևտրական կենտրոն. Բագու. Անդրկովկասի արդյունաբերության կենտրոն. Բաթումը, Փոթին նավահանգիստներ: Քարտեզի վրա դիտել այդ քաղաքները և նրանց կապը—ճանապարհը մեր յերկրի հետ:

դասակարգը իր իշխանությունը ստեղծելով—3 ժամա բանվորական ուր, գործարանների ազգայնացումը, շահագործողների վոչնչացումը. չքավոր և միջակ գյուղացիների ազատագրումը գյուղի գոյությանը: Բանվորի և գյուղացու միությունը և փոխադարձ ոգնությունը. պատկերներ մեր յերկրի անցյալից և ներկայից. նրանց համեմատությունը:

3) Խնչ և անում խորհրդային իշխանությունը գյուղի կուլտուրական վիճակը բարձրացնելու և նոր կենցաղ մտցնելու համար: Գյուղի նոր հատակագիծը, հիվանդանոց, դեղատուն, բաղանիք, արտաքնոց, խմելու ջուր: Դպրոցներ, լիկկայաններ, խրճիթ-ընթերցարաններ, թատրոն, պատի լրագիր: Հին կենցաղը կապված էր յեկեղեցու և հարուստների շահերի հետ. սնտուկապաշառություն և հին աղաթները. նոր կենցաղը կապված գիտության և չքավորների շահերին: Խնչ էյին անում ցարական և դաշնակցական կառավարությունները. Հայաստանի ժողովուրդների համար նրան սարկացնելու նպատակով ազգամիջյան կոնֆլիկտ, պատերազմներ գաղթ և չքավորություն:

Դ. ԽՈՒՄԲ

1. ՄԱՐԴ

Մարդու մարմնի կազմությունը և կյանքը (տարրական հասկացություններ)։ Մարդը վորպես մեքենա, մկանները և վոսկրները։ Նշարդերի և ուղեղի գերն աշխատանքի ժամանակ։ Զգայարանները, սննդառությունը։ Լավ և վատ սնունդ։ Մնունդ և աշխատանք։ Արյան շրջանառությունը։ Շնչառությունը։ Տարափոխիկ հիվանդություններ և նրանց պատճառները։

Գյուղացու և բանվորի աշխատանքի բաշխումը տարվա ընթացքում։ Այդ աշխատանքի տեվորությունը որվա ընթացքում։ Հանգստի պահ և քուն։ Կանոնավոր և բավարար սննդառություն անհրաժեշտությունը աշխատանքի ժամանակ։ Տղամարդու, կնոջ և անչափահասի աշխատանքը գյուղում և քաղաքում։ Աշխատանքի տարբեր տեսակները քաղաքում և գյուղում։ Մշակել՝ աշխատանքի և հանգստի կանոններ։ Մշակել ընդհանուր առողջապահական կանոններ։

Հասարակական խնամատարությունը բանվորների աշխատանքի պաշտպանություն մասին։ (ժամյա աշխատանք, արձակուրդ, հանգստյան տուն և այլն)։ Աշխատանքի ժողովուրդ։ Պայքար հիվանդությունների դեմ (բժիշկ, բուժարան, հիվանդանոց, դեղատուն և այլն)։

Երասկուրսիաներ դեպի հիմնարկությունները։ Կազմակերպել աշակերտական սանիտար հանձնաժողով։

2. Հոկտեմբերյան հեղափոխությունը. Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում

Կալվածատերերն իբրև հողատերեր, գյուղացիները և կալվածատերերի շահերի հակամարտությունը։ Մեղնում ռվքեր ելին կալվածատեր—բեկերը, մեխիքները, աղաները, վանքերը։ Ծորտառիրական կարգերը ցարական Ռուսաստանում։ Գյուղացիական ապստամբությունները Ռուսաստանում, Անդրկովկասում և Հայաստանում։

2. Կապիտալիստներն ու բանվորները։ Կապիտալիստները—գործարանի տեր։ Բանվորի աշխատանքի ժամերը։ Առողջապահական վիճակը, աշխատավարձն ու հավելյալ արժեքը—շահագործման միջոցներ ելին կապիտալիստի համար։ Բանվորության պայքարը կապիտալիստների դեմ։ 1905 թվի հեղափոխությունը։

3. 1914 թ. իմպերիալիստական պատերազմը և ցարի կառավարությունը։ Կոմունիստական կուսակցությունը և Լենինը պատերազմի և հեղափոխության մասին ինչ ելին մտածում և ծրագրում։

1917 թ. փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունը, Խորհրդային իշխանության առաջին զեկրետները հողի, գործարանների, ազգերի ինքնորոշման, պատերազմի մասին։ Անդրկովկասը փետրվարյան հեղափոխության ժամանակ։ Անդրկովկասի—Ադրբեյջանի, Հայաստանի և Վրաստանի բանվորների և գյուղացիների ապստամբությունները—ազգայնական, բուրժուական կառավարությունների դեմ։ Անդրկովկասը Խորհրդային իշխանության որոք։ Հայաստանի Խորհրդայնացումը։ Ինչ գրեց ընկ. Լենինը Անդրկովկասի կոմունիստ ընկերներին՝ մեր չերկրի մասին։

3. Խ. Ս. Հ. Մ.

1. Խ. Ս. Հ. Մ. Միություն սահմանները, մակերևութը, վոտոգումը, կլիմայական շրջանները։

2. Խ. Ս. Հ. Մ. բնական հարստությունները, հողն ըստ տեսակների և գոտիների։ Զրերը, գլխավոր գետերը իրենց ավազաններով, լճերը, ծովերն ու ովկիանոսները։ Անտառները, ներանց գոտիները—ըստ բուսական տեսակների։ Կենդանական աշխարհը։

3. Խ. Ս. Հ. Մ. հանքային հարստությունները—ցույց տալ գլխավոր լեռնային հարստությունների շրջանները։ Հազորգակցության բնական ճանապարհները—ջրային և ոգային։

Առանձնապես շեշտել Անդր-

1. Խ. Ս. Հ. Մ. արտադրող և մշակովի արվեստներության գլխավոր ճյուղերը։

2) Խ. Ս. Հ. Մ. գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը—գյուղատնտեսական շրջանները ըստ մշակույթների։ Անտառային տնտեսություն, ձկնորսություն, վորսորդություն, անասնապահություն։ Անդրկովկասի գյուղատնտեսական գլխավոր ճյուղերը (բամակ, խաղող, ծխախոտ, թեյ, անասնապահություն, ձկնորսություն)։ Գյուղատնտեսության մեջ գործադրվող մեքենաները։ Քարտեզի վրա նշանակել գյուղատնտեսական շրջանները Խ. Ս. Հ. Մ.ում և Անդրկովկասում։ Համեմատել մեր գյուղի, շրջանի

1) Խ. Ս. Հ. Մ. ի բնակչությունը ազգություններով։ Միության մեջ մտնող ազգային հանրապետությունները։ Խ. Ս. Հ. Մ. Սահմանադրության հիմնական կետերը։ Կինը և անչափահասները Խ. Ս. Հ. Մ.ում։

2. Գյուղական բնակչությունը Խ. Ս. Հ. Մ.ում՝ ըստ զբաղմունքների և սրտ հետ կապված կենցաղի—(վորսորդական, քոչվոր, անասնապահ և նստակյաց ժողովուրդներ)։ Ոգտապործելի հողերի քանակը. նրանց ազգայնացումը ինչ ավեց գյուղացիներին։ Զբաղվոր—միջակ գյուղացիությունը. կուլակ և նրա գերը. բառրակները և նրանց միությունը Խ. Ս. Հ. Մ. ի գյուղա-

կովկասի դիրքը, բնական հարըստութիւնները: Ուսումնասիրել և նկարել Խ. Ս. Հ. Մ. և Անդրկովկասի բնապատմական քարտեզները:

համապատասխան ճյուղերի հետ և ծրագրել գարնանային աշխատանքները մեզնում:

3) Խ. Ս. Հ. Մ.-ի արդյունաբերութիւնը. (ծանրալեռնային և գործարանային արդյունաբերութիւնը). գյուղատնտեսական հում նյութերի մշակման հափը. մեքենարդյունաբերութիւնը և նրա նշանակութիւնը Խ. Ս. Հ. Մ.-ի համար: Անդրկովկասի արդյունաբերութեան գլխավոր ճյուղերը—(նավթ, պղինձ, մանգան, քարածուխ, մանածային, ձէթի, ծխախոտի, սպիրտի և այլն):

Քարանդի վրա նշանակել արդյունաբերական շրջանները: Եւքսկուրսիա դեպի մոտիկ գործարաններն ու հանքերը: Նկարների և կիրնո ժապավենի միջոցով ծանոթանալ գյուղատնտեսութեան և արդյունաբերութեան ձևերին:

4) Հաղորդակցութեան միջոցները Խ. Ս. Հ. Մ.-ի. յերկաթուղիները, ջրային ճանապարհները, ողային գլխավոր գծերը, փոստ, ուղի, հեռագիր:

5) Խ. Ս. Հ. Մ. արտադրած գլխավոր ապրանքների և նրանց շրջանառութեան ճանապարհը: Պետական, կոոպերատիվ և մասնավոր առևտուրը Խ. Ս. Հ. Մ.-ում:

4. Խ. Ս. Հ. Մ. յեվ մյուս յերկրները

Տնտեսական բաժանումը ամբողջ աշխարհում: Մայր յերկրների (մետրապոլիա) և գաղութների տնտեսական տարբերութիւնները: Գաղութները, իբրև հում նյութեր մատակարարող և սպառող շուկա: Շահագործումը գաղութներում: Գլխավոր գաղութները աշխարհում:

Մեր յերկրին մոտ գտնվող գաղութները: Համաշխարհային հաղորդակցութեան միջոցներ. գլխավոր ջրային ճանապարհները. յերկաթուղային գծեր, ողային գծեր: Խ. Ս. Հ. Մ.-ի և մեր յերկրի հաղորդակցութեան ճանապարհները: Գլխավոր պետու-

տնտեսութիւնը բարձրացնող ուժերը Խ. Ս. Հ. Մ.-ում: Ելեքտրոֆիկացիան: Գյուղատնտեսների թիվը Խ. Ս. Հ. Մ.-ում: Գյուղատնտեսական բարձր, միջին, և տարրական դպրոցներ: Տրակտորիզացիա, գյուղատնտեսական մեքենաներ—կոոպերատիվ միութիւններ, գյուղատնտեսական բանկ: Վոտովում և հողի մշակման ձևերը. բազմադաշտյան սխտեմ:

3) Խ. Ս. Հ. Մ.-ի բանվորութիւնը. ցույց առնել նրա քանակը. գլխավոր բանվորական կենտրոնները. Խ. Ս. Հ. Մ.-ի ամենագլխավոր քաղաքները և նրանց կապը միմյանց հետ: Բանվորի աշխատանքի պայմանները Խ. Ս. Հ. Մ.-ում. 8-ժամյա բանվորական որ: Գործարանների ազգայնացումը: Գործարկում: Արհեստակցական միութիւնների գերը Խ. Ս. Հ. Մ.-ի մեջ: Խորհրդային իշխանութիւնը բանվորների և գյուղացիների իշխանութիւնն է, բանվորութեան ղեկավարութիւնը:

Բանվոր լեգիտիմացիայի յերկրները Խ. Ս. Հ. Մ.-ում. Լ. Կ. ՅՇ. Մ. և պիտեքներ: Բանվորական ուժ պատրաստող դպրոցներ (բուժաշակ, դպրոցներ, բանվորական ֆակուլտետներ և այլն):

4) Կարմիր բանակ. նրա գերը Խ. Ս. Հ. Մ.-ի համար: Ժող. դատարան: Բանվորա-գյուղացիական միլիցիա: Կարգալ հոգվածներ Խ Ս Հ.Մ.-ի անցյալին վերաբերող. համեմատել անցյալը ներկայի հետ:

Իշխող պետութիւնները և նրանց փոխ-հարաբերութիւնը. պայքար գաղութների համար: Ինչու ծագեց համաշխարհային պատերազմը: Բանվորների գյուղացիների և գաղութային ժողովուրդների շահագործումը կապիտալիստների կողմից: Կրօնը, յեկեղեցին-շահագործման միջոցներ (միսյոներների վերաբերմունքը դեպի Խ. Ս. Հ. Մ. (որինակներով և փաստերով): Բուրժուական պետութիւնների վերաբերմունքը դեպի աշխատավորների միջազգային միութիւնը: Ինտերնացիոնալ: Հեղափոխական բանվորների միջազգային փո-

1. Յերկրագունդ. համառոտ տեղեկութիւններ Ֆիզիքական աշխարհագրութիւնից, ցամաքներ, ջրամբարներ, մթնոլորտ: Գիշեր և ցերեկ: Արև, լուսին, մոլորակներ: Յերկրը մոլորակ: Տարի և տարվա յեղանակները. բեմառներ, հասարակած, կլիմայական գոտիներ և կենդանական ու բուսական աշխարհը ըստ գոտիների: Համեմատել այդ մեր յերկրի և Խ. Ս. Հ. Մ.-ի գոտիների հետ:

թշուհներին ապրանքային շրջանառությունը:

Խ. Ս. Հ. Մ.-ի արտաքին առևտուրը և նրա բնույթը:

խաղարձ ոգնություն—Մոպր:

Պատկերներ մարդկության անցյալից՝ ստրկատիրական, ճորտատիրական, կապիտալիստական շրջաններ: Պատկերներ զանազան յերկրների գյուղացիական և բանվորական շարժումներից:

ա. Մասնակցություն բոլոր հեղափոխական տոներին.

բ. Տարեվերջին ավարտական խմբի հաշվետու զեկուցումը՝ ազգաբնակչության առջև իր կատարած աշխատանքների մասին:

Հաշվետվության մեջ զետեղել հետևյալ նյութերը:

1) Գյուղատնտեսության զարգացման հեռանկարները մեր գյուղում և գավառում.

ինչ սովորեցինք դպրոցում այդ մասին:

2) Հաղորդակցության միջոցները մեր գյուղի և գավառի համար:

3) Կոոպերացիայի զարգացումը իբրև գյուղի չքավորության կազմակերպման ձև և այլն:

ԴԱՍԱԳՐՔԵՐ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ

Ա. խումբ—Դասընկեր և Լուսարձակ Ա. տարի.

Բ. » — Լուսարձակ Բ. տարի. Բ. հրատ. և Կենդանի թվեր

Գ. » — Լուսարձակ Գ. տարի. » » թվաբանություն Գ. տարի և բնություն (տպագրվում է).

Դ. » — Կարմիր արև Ս. Հակոբյանի Բ. հրատարակ. թվաբան. Լանկով. Գ. տ.

Աշխարհգ. I և II մ. [redacted]

» տետր I և II մ. » »

Աշխարհագրական քրեատոմատիա [redacted] տպագրվում է.

Տիգեզերք—Կամենշչեկով և Դարեր ու մարդու աշխատանքը:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ՌԻՍՈՒՑԶԻ ՀԱՄԱՐ

1. Յերկրաբանություն. Հ. Հովհաննիսյան:

2. Հողի պատմությունը—

3. Ձորացած հողը—Հարվուտ:

4. Գյուղատնտես. աշխատ. ամերիկ. դպրոց.

5. Մարդու անատոմիան և բնախոս. Ջավյալով.

6. Խ. Ս. Հ. Մ. աշխարհագր. Հ. Հովհաննիսյան.

7. Տնտեսակ. աշխարհ. Բարիսով.

8. Ռ. պատմություն Պակրովսկի. համոռոտ.

9. Քաղաքագիտ. հայկ. քաղ. դպրոց. համար:

10. Քաղաքագիտություն — Բերդնիկով Սվետլով:



ՀՀ Ազգային գրադարան



NL0232020

